№ 39 Մարտի 11 (23) 1880 Մարտի 11 (23) № 39

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տան օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց թատրոնական գործը,—Ներքին տեսութիւն, Նամակ Ախալցխայից, Նամակ Ցարիցինից, Նամակ Եկատերինոդարից, Ներքին լուրեր,—Արտաքին տեսութիւն, Գերմանիա, Արտաքին լուրեր,—«Մշակի» հեռագիրներ,—Յայտարարութիւններ,—Բանասիրական, Խենթը

## ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Այս օրերս հաւաքվեցաւ Թիֆլիսի հայոց թատրոնական ընկերութեան ընդհանուր ժողովը, թատրոնական կոմիտէի նոր անդամներ ընտրելու համար,—և ընտրեց կրկին հին անդամներին։

Ընկերութեան անդամները, որոնք փող են նուիրել յօգուտ թատրոնական գործի բազմաթիւ են, իսկ վերջին ընդհանուր ժողովի մէջ հաւաքվեցան միայն երեսուն հոգի, և այդ երեսուն մարդիկ կազմեցին ժողով, լսեցին հաշիւ, վճիռներ կայացրին և կոմիտէի անդամներին ընտրեցին։ Կոմիտէը, ի հարկէ, աշխատեց որ մեր տեղական հայոց լրագիրներում առաջուց չը յայտնվի որ լինելու է ընդհանուր ժողովը...

Ընդհանուր ժողովը ուրախութիւն ունեցաւ լսել կոմիտէի ներկայացրած հաշիւը, որից երևում է թէ կոմիտէը, չը նայելով որ ահագին արդիւնքներ ունէր այս սեզօնի ներկայացումներից, մօտ 2000 ռուբլու դէֆիցիտ կրեց....

Եւ զարմանալի չէ. եթէ ամեն մի դերասանին ու դերասանուհուն ընծաներ են ընծայում, ի հարկէ դէֆիցիտ կը լինի։ Բայց այդ բաւական չէ. Թիֆլիսի հասարակութենից հաւաքած 8000 ռուբլ գումարից մի սեզօնի մէջ 7000 ռուբլ պ. Պալմի գրպանն է ածել կոմիտէը։ Հաշուելով 35 ներկայացումն և իւրաքանչիւր ներկայացման դահլիճի վարձ 200 ռուբլ պ. Պալմին,—կը գոյանայ 7000 ռուբլ.... Ահա, ինչպէս են վարվում հասարակական փողի հետ։

Երևի հասարակութիւնը չը մոռացաւ, որ Աբծրունու թատրոնը ձրի էր առաջարկվում կոմիտէին։

Երէկ մեզ աջողվեցաւ խօսել կոմիտէի անդամներից մինի հետ. նա յայտնեց որ կոմիտէը այն պատճառով չէ անցնում Աբծրունու թատրոնը, որ այդ թատրոնի բեմի վրա պրօվաներ չը կան.... Այժմ, ուրեմն պրօվաների բացակայութիւնը պատճառ են բռնում։ Կարծես թէ մի պիէսայի համար, ինչպէս, օրինակ, «Ընջելը» պիէսան է, անպատճառ պէտք է պրօվաներ լինեն։ Իսկ բեմի փոքրութիւնը շատ լաւ յայտնի էր կոմիտէի անդամներին. նրանք իրանք ամեն օր դալիս էին երբ թատրոնը շինվում էր, վերահսկում էին շինութեան վրա, իրանք հրահանգներ էին տալիս և գոհ էին երևում թէ թատրոնի և թէ բեմի մեծութենից.... Բայց երբ թատրոնը վերջացաւ, և թատրոնի տէրերը մեծ ծախսեր արեցին, այն ժամանակ թատրոնը անյարմար յայտնվեցաւ և հայ ինտելիգէնցիայից բաղկացած կոմիտէը աւելի լաւ համարեց հարստացնել մի օտարազգուն, ածել պ. Պալմի գրպանը 7000 ռուբլ մի սեզօնի մէջ, քան թէ օգուտ քաղել մի հայի կառուցած թատրոնից։

Այդ դեռ բաւական չէ. կան այն աստիճան անամօթ մարդիկ, որոնք թէ Թիֆլիսում լուր են տարածում, թէ Կ. Պոլսի հայ լրագիրներին տեղեկութիւններ են հաղորդում, որ կոմիտէը չը կամեցաւ վարձել Աբծրունու թատրոնը այն պատճառով, որ գնի մէջ չը համաձայնվեցան. այն ինչ թատրոնը հայոց խմբին անվարձ էր տրվում։

Աբծրունու թատրոնի տէրերը բաւական միամիտ էին որ հաւատացին կոմիտէին, շինեցին թատրոն, մեծ գումարներ ծախսեցին և ոչ հայոց, ոչ էլ վրաց խումբը չանցաւ նոր շինած թատրոնը։ Այժմ նրանք երևի աւելի հեռատես կը լինին, չեն շինի պրօվաներ, որպէս զի կրակի դէմ ապահովութեան պրէմիան երկու անգամ թանգ վճարեն, ուրեմն կը բռնին նոր ծախսեր անեն,—իսկ հայերն ու վրացիք դարձեալ յարմար չը համարեն անցնել այդ թատրոնը։

Թիֆլիսցի հայ ինտելիգէնցիայի հետ գործ ունենալու համար պէտք է նրանց հետ վարվել այնպէս, ինչպէս նրանք իրանք են վարվում ուրիշների հետ։ Աբծրունու թատրոնի տէրերը պէտք է սկզբից աւելի հեռատես լինէին. երբ թատրոնի շինութիւնը նոր էր սկսվում, իսկ կոմիտէի անդամները փող սկսեցին հաւաքել հասարակութիւնից, թատրոնի տէրերը պէտք է նստարիական

## ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ

—

ԺԱ.

Ցանուտէր խաչօի ամուսինը իր վերջին զաւակի՝ Ստեփանիկի ծնունդից յետոյ վախճանվեցաւ։ Այնուհետև խաչօն չամուսնացաւ, թէև նրա հասակում գիւղացին առանց կնոջ չէ մնում։ Ցանակում գիւղացին առանց կնոջ չէ մնում։ Ցանակում գիւղացին առանց կնոջ չէ մնում։ Ցան

*Թղթով կապվելին կոմիտէտի հետ, մեծ տուգանք նշանակելով, եթէ իր խօսքը չը կատարի և չը պէտք է հաւատային կոմիտէտի ազնիւ խօսքին, որովհետև պէտք է հասկանային որ Թիֆլիսցի հայի, մանաւանդ բարձր ուսում ստացած, ինտելիգէնցիային պատկանող Թիֆլիսցի հայի ազնիւ խօսքին անկարելի է հաւատալ, ինչպէս որ նրանք իրանք շատ լաւ գիտեն և միմեանց ազնիւ խօսքերին երբէք չեն հաւատում:*

*Թիֆլիսցի հայի, մանաւանդ լուսաւորված հայի հետ գործ ունենալու ժամանակ, պէտք է անպատճառ նրանից ունենալ կամ նոտարական թուղթ, կամ վէկսէլ:*

Գ. Ա.

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

—

Փետրվարի 11-ին

Այցելելով այստեղի օրիորդական ուսումնարանները, ես մի տեսակ տրամադրութիւնով դուրս եկայ. կարծես թէ վանեցոց սովատանջ կոտորվածը էլ դադարեց իմ միտքը ճնշել. մի վայրկեան կարծես թմրած էի և երազային մոռացման մէջ, բայց աւաղ, այդ թմրութիւնը զմայլմունքից չէր, այդ թմրութիւնը առաջ էր գալի աւելի վատթար բարոյական հարուածից, քան թէ Հայաստանի բաթալից լուրը....

—Քանի տարի է չարունակվում օրիորդների՝ ուսման ընթացքը, Հ. Մ., հարցրի ես սիրալիր պարոնին, որը առաջնորդում էր ինձ իմ այցելութեան տեղը:

—Վեց տարի, պ. Ն., եղաւ պատասխան. երեք տարի «Նոր-Արշալոյս» օրիորդական ուսումնարանում աւարտելուց յետ, մնում են Եղիսաբէթեան ուսումնարանը, որտեղ ընթացքը աւարտում են նոյնպէս երեք տարվայ մէջ.—Ես այստեղ ոչ մի ախալցխացի աղջիկ չեմ տեսնում ցաւակցաբար, նկատեցի իմ առաջնորդողին.—Ի՞նչու, պ. Ն. հարցրեց զարմացմամբ Նա. սոքա բոլորն էլ բուն ախալցխացի օրիորդներ են, որոնց հայրերը Հայաստանից նոր են գաղթած.—Բայց այսպիսի հաղուստով Ախալցխայում գրեթէ ոչ մի փոքրիկ հայուհի ես չեմ պատահել, ուր մնաց որ Հայաստան.—Այո, ասեց առաջնորդը կիսաժպտով. յիրաւի Ախալցխայի ազգային հագուստը ուրիշ է և աշակերտուհիները տանը իրանց հագուստն ունեն, իսկ ուսումնարանի մէջ խստիւ հրամայված է թեմական տեսչից, որ աշակերտուհիք բոլորն էլ միատեսակ վայելուչ լինեն եւրոպական հագուստի մէջ.—Հը՛մ, բայց դժբաղդաբար այստեղ ոչ ոք վայելուչ չէ եւրոպական հագուստով, քանի որ ոչ ոքի վրա չը կայ այդ հագուստը, նկատեցի նորան, էլ ամաչելով ասել որ հայուհիների տեղ, աչքիս առաջ կանգնած էին միայն կօզակների գիւղերում տեսնվող իսկական անփոխան մատուշկաներ.—Այո՛, ասեց ընկերս, բնական է որ վայելուչ եւրոպական հագուստ ոչ ոքի վրա չէք կարող տեսնել, քանի որ գրեթէ բոլորն էլ աղքատ ծնողների և չունևոր դասի երեխայք են այստեղ.—Եթէ այդպէս է, ինչու ուրեմն չէք թողնում խեղճ մանուկներին այցելել ուսումնարանը իրանց այնչափ սիրուն և այնչափ վայելուչ ազգային չորերում, օրհնված մարդիկ, բացականչեցի համբերութիւնս կորցնելով.—Այդ՝ թեմական տեսչի պարտականութիւն է և իրաւունքը, պ. Ն. պատասխանեց առաջնորդս, մենք այստեղ միայն ուսուցիչներ ենք, վանն որոյ չենք կարող խառնվել նորա արած կարգադրութիւնների մէջ, թէպէտ մենք էլ համոզված ենք որ Ախալցխայում ազգային հագուստը՝ մի անմոռնի հագուստի փոխարինելը բոլորովին աննպատակ է, եթէ չասած վնասակար։

Խոստովանվում եմ հրապարակապէս որ այդ բոպէ, փոխանակ մանկավարժների, թեմական տեսուչները միայն տգէտ ֆէլդֆէբելներ յիշեցրին ինձ, այն զանազանութեամբ ի հարկէ, որ ֆէլդֆէբէլները ստանում են ամսական 5 բուբլի, իսկ մեր թեմական տեսուչները 150 ր.։ Եւ յիրաւի մթեթ մանկավարժական պահանջ է ուսումնարանի մէջ ազգային զգեստը ջնջելը և նորա տեղ մի ամբողջ սերունդ սովորացնել այն փարթամ հագուստին, որի սկիզբը ուսումնարանի մէջ կարող է լինել, իսկ վերջը մի ուրիշ սոսկալի տան մէջ....Մթեթ մանկավարժական պահանջ է՝ համոստ հագուստի տեղ, չքեղ հագուստի ճաշակ զարգացնելը, միատեսակ և դարերով չը փոխվող զգեստի փոխանակ, ամեն օր ձեր փոխող շորմտցնել, տընարարութեան համար հնարած և յարմարեցրած հայկական գոգնոցը՝ առաջը ճեղքած նորաձև շորի փոխել....Մանկավարժութեան պահանջ է արդեօք այդ, վաղվայ Ախալցխայի թեմական տեսուչ, պ. Ցէր-Յովհաննիսեան։ Ի սէր Աստուծոյ, եթէ այդ պահանջը դուք ճանաչում էք ինչպէս մանկավարժ, աղաչում ենք ձեզ հայոց երեխաների խաթէր բացառութիւն անել և ձեր հրատարակող թերթի մէջ էլ չը քարոզել այդ. ապա թէ ոչ ձեր հրահանգներին լսելով տասը տարից յետ ամբողջ հայկական քաղաքներ կօզակների ստանիցաներ կը փոխվեն..... Իսկ դուք, Շիլլերի յարգելի թարգմանիչ, այդչափ է ձեր հոգացողութիւնը ազգային էկոնոմիայի վրա, այդչափ էք դուք յարգում ազգի աւանդութիւնները, այդպէս էք խնամք տանում ապագայ սերունդի մէջ համեստութիւնը և ազգային զգացմունք մուցանելու համար.....

Պարոններ, եթէ ձեզ ապրուստի ուրիշ ճանապարհ չը կայ, ի սէր Աստուծոյ, մի՞ք ապրիլ ժողովրդին մոլորեցնելու և քանդելու գնով, խնայեցէք նորան և մի փոր պահելու համար մի՞ք աղավաղիլ ժողովուրդը. հեռացէք, իսկ եթէ կարծում էք որ առանց ձեզ ուսումնարանները կը փակվեն՝ այդ գուցէ աւելի բարութիւն կը լինի, քան թէ ձեր այժմեան հրահանգներին հետեւելը....

Ես դեռ միայն չորերի վրա եմ խօսում. էլ չեմ ուզում խօսել աշակերտուհիների վեց տարվան պարապմունքի վրա. Ցէր Աստուած, որ աշխարհից են եկել այսչափ ուսուցիչներ, որոնք երկու աչք ունենալով, տարիներով տեսնում են հայ ժողովրդի պահանջը և էլի իրանց էշը քշում. էլի կապիկների կեանք սովորացնում և փոխանակ մի կտոր հացի՝ խեղճ հայ երեխաներին տեղափոխիկ ագռաւների տեսակը զանազանել առաջարկում. Է՛հ, բայց ձեզ ինչ. դուք ստանում էք ձեր հազարները և օրհնում Աստուծուն, որ նա այսչափ ուսումնասէր է ստեղծել հայկական ազգին.... Թչուառ ազգ, երբ պիտի դադարես արդեօք կախնալից կով լինելուց անկուշտ և անողորմ վամպիրների համար....

Գր. Նիկողոսեան

## ՆԱՄԱԿ ՑԱՐԻՑԻՆԻՑ

—

Փետրվարի 21

Կարդալով պատուական «Մշակի» № 19 թերթի առաջնորդող յօդուածը «Ում դիմենք», մենք Ցարիցինի փոքրիկ խումբերս պատառված ազգից, հեռու դէպի հիւսիս, հոգով ցանկացանք թռչելու դէպի ազգի կենտրոնը և նայել, արդեօք այդ խօսքերը ներգործեցին այն ապառաժ սրտերի վրա, թէ ոչ. ճշմարիտ է, այժմ սովը և Կովկասի մի քանի տեղերում զգալի է, բայց վանեցոց կեանքը ճշմարտապէս թանգ արժէ մեր կեանքից, Ուրեմն, հայեր, ձեռ մեկնենք դէպի մեր տառապեալ և սովատանջ եղբայրները, նոքա չեն դադարում յուսալ դէպի՞ մեզ և մեք նոցա չը թողնենք յուսազուրկ։ Ահա մենք փոքրիկ խումբերս սկսեցինք. թող այդ լինի որպէս կայծ, և որպէս հրդեհ տարածվի բոլոր հայոց սրտերի մէջ։ Ահա այսպէս կը գտնէք ընդամենն գոյացաւ 175 բուբլ և առաջ ուղարկված էր խմբագրութեանդ պահպանութեանը 125 բուբլի Անիի մէջ ապագայ կազմվելիք դպրոցի համար, այժմ մենք վճռեցինք որ և այդ 125 բուբլին միատեղ այժմ ժողովված 175 բուբլու հետ հասցնվի Վանի սովելոց։

Մենք ամենքս չատ հնորհակալ ենք ռուս և հրէայ ազգի համակրութեանը դէպի մեր գործին. դուք կը գտնէք ստորագրողների մէջ չատ ազգանուններ այդ երկու ազգերին պատկանողներից. թող հայերը գտնեա այդ ազգերից օրինակ առնեն՝ և չուտով փրկեն սովից մեր սրտին սիրեցեալ եղբայրներին և քոյրերին։

Կարդալով նմանապէս որ կ. Պոլսի երեք պատկառելի ընկերութիւնները միացել են մի ուժեղ ընկերութիւն կազմելով, չտապում ենք մեր զգացմունքը յայտնելու։ Ահա տարեկան անդամութեան համար ստորագրողների մի փոքրիկ ցուցակ, որից գոյացաւ 100 բուբլի, ստացէք. ընդամենն է 275 բուբլի և Անիի համար ուղարկուածը 125 բուբլի որպէս յիշեցինք, միաւորելով միատեղ լինում է 400 բուբլի. խնդրենք, յարգելի խմբագրապետ, հասցնել ուր հարկն է։

Մեր հայերը սիրում են որ մեկը նրանց յորդորի դէպի բարի գործ և նրանք յայտնում միայն չեն խնայում իրանց լումայ մատուցանելու ազգի կարեաց։ Այսպիսի յորդորողներից մինն էլ մեր մէջ, պ. Զաքար Կրասիլնիկեանցին, յայտնում ենք մեր 'ի սրտէ շնորհակալութիւնը.

Ցանկալի էր սոյնպիսի անձինք չատ գտնվէին մեր այլ քաղաքներում, որպէս է Բաքուի պ. Վարդիգուլեանց Յովհաննէսը։ Թիֆլիսցիներին քաջայայտ է, որ նորա աշխատութեամբ և յորդորանքը այն ուշադրութեան արժանի գումարը ժողովված է յօգուտ «Արարատեան ընկերութեան». յարգ և պատիւ սոցա պէսներին։

Մի խօսք ևս աւելորդ չեմ համարում յիշելու, երբ Բաքու պ. Վարդիգուլեանցը չրջում էր ստորագրութեան թերթը ձեռին հասարակութեան մէջ, պ. Ե. Պ. Լալայեանցը խոստացաւ Վանի մէջ իր հաշվով մէկ դպրոց բանալու և այդ հիման վրա հրաժարվեց ստորագրութենից թէ այդ «չնչին օգնութիւններով ինչ պէտք է առաջանայ»։ Այժմ մենք որպէս սովեալներ անթարթ աչք և լարուած ուշադրութեամբ անդադար սպասում ենք խոստացման իրագործութեանը. մենք չենք կշտանում միայն խոստմունքներով, յանդգնում ենք պահանջելու,—պատճառ մենք հաւատում ենք, երբ խոստացված է, պէտք է կատարվի—դրանով մենք մտաբերում ենք, գուցէ չատ զանազան զրաղմունքներ տվել են այդ խոստմունքը մոռացութեան, դարձեալ յուսանք որ կը կատարվի։

***

---

ծուկ տեղ ու կասես... (Դրա համար էի քեզ կանչում այն ծառերի տակը, այնտեղ ծածուկ էր)։

—Այստեղ էլ ծածուկ է, մեզ ոչ ոք չէ լսում, Ինչ ասաց տիկինը։

—Տիկինը ասաց, որ դուք Ստեփանիկին չուտով հեռացնէք և մի ուրիշ երկիր տանէք։ Թէ որ մարդիկ չունէք, ասաց տիկինը, ես մարդիկ կը տամ, որ տանեն, և ուր որ ուզում էք, այնտեղ հասցնեն։ Առաւօտը չէր չէր լուսացել, այդ խօսքերը ասաց տիկինը։—Երդվիր, ասաց, Ջաւօ, որ բերնումդ կը պահես և ուրիշին չես ասի։ Ջաւօն երդվեցաւ։

Յետոյ աղջիկը պատմեց, թէ տիկինը՝ սպառնացաւ, որ կը սպանէ Ջաւօին, եթէ մի ուրիշ մարդու յայտնելու լինի այդ գաղտնիքը, և աւելացրեց թէ ինքը չատ է վախենում տիկնոջից, որովհետև նա կարող է սպանել, թէ ինքը իր աչքով էր տեսել, որպէս նա մի օր սպանեց սպասաւորներից մէկին, բայց թէ ինչ բանի համար էր, Ջաւօն այդ չի ասի.... Բայց խեղճ Սառան չը լսեց վերջին խօսքերից և ոչ մէկը։ Ստեփանիկի անունը լսածին պէս, կարծես, կայծակով նրան հարուածեցին, նա սարսափեցաւ, թուլացաւ, և ուշաթափ գետին պիտի գլորվէր, եթէ քուրդ աղջկայ զորեղ ձեռքը չը բռնէր նրան։ Միամիտ աղջկան թէև անհասկանալի էր ողորմելի կնոջ ցաւալի խռովութիւնը, բայց զգաց, որ չատ դառն էր հաղորդած լուրը, և սկսեց մխիթարել նրան։

—Թող Սառան դարդ չանի. Ջաւօի տիկինը քանի կենդանի է, չի թողնի, որ աղան այս տնից աղջիկ տանէ։

—Ի՞նչ աղջիկ, հարցրեց Սառան, մի փոքր ուշի գալով.—մեր տանը հասած աղջիկ չը կայ։

—Աղան գիտէ, որ Ստեփանիկը աղջիկ է։

Այդ միջոցին Ստեփանիկը բակում կերակրում էր իր այծեամին, որ մի քանի օր առաջ բէկը ընծայել էր նրան։ Արեի ճառագայթները ընկել էին պատանու դեղեցիկ դէմքի վրա, և հեռուից նկարվում էր նրա վայելչակազմ հասակը։ Սառան ցոյց տուեց աղախնին, ասելով.

—Ցեսնում ես, նա է Ստեփանիկը, լաւ մտիկ տուր, նա աղջիկ է։ Ո՞վ է ասել աղային մի այդպիսի սուտ բան։

—Աղային ասել է ձեր քուրդ աղախիններից մէկը՝ Հիլօ հովիւի կինը։—Տիկինը ասում էր, ես սպանել կը տամ այն անղգամին։

—Հիլօի կինը սուտ է ասել. նա մեր տնից բան գողացաւ, մենք նրան դուրս արեցինք. դրա համար սուտ է ասել։

Սառան նկատեց, որ Ջաւօն թէև միամիտ աղջիկ էր, բայց այնքան յիմար չէր, որքան ինքը կարծում էր, բացի դրանից, տեսնելով նրա անկեղծ հաւատարմութիւնը դէպի իր տիկինը, որ առհասարակ յատուկ է կիսավայրենի աղախիններին,—պատուիրեց նրան մի քանի խօսքեր, խնդրելով, որ հաղորդէ իր տիկնոջը։ Նա ասաց, որ Ջաւօն իր կողմից փոխադարձապէս ողջունէ տիկնոջը և հարցնէ նրա քէֆը։ Նա խնդրեց, որ Ջաւօն յայտնէ տիկնոջը Սառայի շնորհակալութիւնը այն տեղեկութիւնների համար, որ այսօր ստացաւ։ Յետոյ Սառան խնդրեց յայտնել տիկնոջը, որ բոլորովին սխալ է կարծել, թէ Ստեփանիկը աղջիկ է, այսուամենայնիւ, քանի որ տիկինը ցանկանում է, որ Ստեփանիկին հեռացնեն այդ երկրից, նրա կամքը կատարված կը լինի։ Յետոյ աւելացրեց Սառան, թէ ինքը չատ կը ցանկանար միանգամ գոնէ տեսնվել տիկնոջ հետ, այդ բաների մասին լաւ խորհրդակցելու համար, և խնդրում է, որ տիկինը ինքը կարգադրէր, թէ ինչ հնարքով կարող էր կատարվել այդ տեսութիւնը, որ բոլորովին գաղտնի մնար։ Վերջացնելով իր յանձնարարութիւնները, Սառան հարցրեց.

—Իմ խելացի Ջաւօ, կարող ես այդ բոլորը առանց մոռանալու հաղորդել քո տիկնոջը։

—Ջաւօն սուր միտք ունի, Ջաւօն չի մոռանայ, պատասխանեց նա, աչակերտի նման միառմի կրկնելով Սառայի ասածները, թէև մի քանի սխալներ արեց, թէև նախադասութիւնները իր եղանակով յետ ու առաջ դարսեց։

Սառան ուղղեց նրա սխալները և Ջաւօն մի քանի անգամ կրկնեց իր դասը։

—Հիմա Ջաւօն այնպէս է ասում, որպէս Սառան է ասում, խօսեց ինքն իրան աղջիկը։—Ճանապարհին Ջաւօն միշտ կը կրկնէ Սառայի խօսքերը, որ չը մոռանայ։

—Կարող են ուրիշները լսել, նկատեց Սառան։

—Ջաւօն այնքան անխելք չէ, Ջաւօն մտքումը կը խօսի։

Աղջիկը նայեց արեգակին, տեսաւ, որ բաւական թեքվել էր դէպի երեկոյեան մուտքը։ Նա վերկացաւ, ասելով. որ այլ ևս ուշանալ կարող չէ, որովհետև բաւական երկար ճանապարհ ունի գնալու մինչև աղայի վրանները։

—Սպասիր, Ջաւօ, ես քեզ համար մի բան բերեմ, դու լաւ աղջիկ ես։

Սառան դիմեց դէպի սենեակը։ Այդ միջոցին Ստեփանիկը, որ դեռ ևս իր այծեամով էր զբաղված, տեսնելով մենակ կանգնած աղջկան, մոտեցաւ նրան։

—Դու գնում ես, հարցրեց նրանից։

—Ցեսնում ես արեը, չուտով կը մթնի, պատասխանեց աղջիկը ձեռքը դէպի երկինքը տանելով։

—Դու մեր տունը եկար, բայց մի բան չը կերար, ասաց Ստեփանիկը։

—Ա՛խ, Ջաւօն մոռացաւ, որ քաղցած է. Ջաւօն այսօր ոչինչ չի կերել։

—Ես քեզ համար ուտելու բան կը բերեմ։

Քուրդ աղջիկը յափշտակվելով պատանու բարեսրտութեամբ, գրկեց նրան և համբուրեց։ Ստեփանիկը վազեց դէպի տունը և բերեց նրա համար լաւաշների մէջ փաթաթած մեղր և կարագ։

—Հիմա նստիր ու կեր։

—Ջաւօն ճանապարհին ուտելով կը գնայ։

Նոյն միջոցին յայտնվեցաւ Սառան, բերելով իր հետ մի գեղեցիկ մետաքսեայ քող կարմիր գոտով, որ կազմում է քուրդ կնոջ գլխի ամենթանգագին զարդը։ Ջաւօն տեսնելով, ուրախութիւնից մոռացաւ ամեն քաղաքավարութիւն, և երեխայի նման վրապրծնելով, խլեց Սառայի ձեռքից գեղեցիկ քողը։ Նա սկսեց նոյն բոպէում նրանով փաթթել իր գեղեցիկ գլուխը, և որպէս հայելու մէջ նայելով, դարձաւ դէպի Սառան ու Ստեփանիկը, հարցրեց.

—Հիմա սիրուն է Ջաւօն։

—Սիրուն է, պատասխանեցին Սառան և Ստեփանիկը։

—Դէ՛, համբուրեցէք Ջաւօին։

Սառան գրկեց և համբուրեց նրան։

—Դու էլ, Ստեփանիկ։

Ստեփանիկն էլ հետևեց Սառայի օրինակին։

—Հիմա Ջաւօն էլ ձեզ կը համբուրէ։

Պարզամիտ քուրդ աղջիկը իր անկեղծ համբոյրները մատուցանելէն յետոյ, ճանապարհ ընկաւ դէպի բէկի վրանները։

(Կը շարունակվի)